«ՓՄՁ Փաթեթային առաջարկի»
արշավի նկարագիրը և օգտվելու հիմնական պայմանները

Արշավի նկարագիրը

Արշավի ժամկետ	2021 թ-ի Օգոստոս 1- Դեկտեմբեր 31
Արշավի պայմաններ	Չափանիշներ, որոնցից առնվազն 3-ի բավարարման դեպքում ՓՄՁ Հաճախորդը կարող է օգտվել արշավի պայմաններից

Ցուցանիշ	1-ին տարբ.	2-րդ տարբ.
Վերջին մեկ տարվա միջին ամսական շրջանառությունը հանրագումարային՝ բոլոր հաշիվների գծով	>1 մլն դրամ	>2 մլն դրամ
POS տերմինալներով գործարքների վերջին մեկ տարվա միջին ամսական շրջանառություն	>500 հազ. ՀՀ դրամ	>1 մլն ՀՀ դրամ
Բանկից ստացված վարկերի գումար	>=10 մլն ՀՀ դրամ	>=20 մլն ՀՀ դրամ
Աշխ. նախագծի մասնակիցների շրջանակ	>=10 աշխատակից	>=20 աշխատակից
Աշխ. նախագծի ներքո միջին աշխատավարձ	>=100 հազ ՀՀ դրամ	>=150 հազ ՀՀ դրամ

Արշավի ներքո տրամադրվող փաթեթի տարբերակներ և պայմաններ

Պրոդուկտ	1-ին տարբ.	2-րդ տարբ.
ԻԲ ծառայության տարեկան վճար	Անվճար	Անվճար
Բիզնես քարտի տարեկան սպասարկման վճար	VISA Classic՝ Անվճար	VISA Classic՝ Անվճար
POS տերմինալով գործարքներից Միջնորդավճար	1.3%*; 2.3%**; 2.5%***	1.1%*; 2.1%**; 2.3%***
Վարկի տոկոս****	Ստանդարտ -0.5%	Ստանդարտ -1%
Արժույթի փոխանակում	ԱՄՆ դոլար՝ գործող փոխարժեք -0.25Դ Եվրո՝ գործող փոխարժեք -0.5Դ ՌԴ ռուբլի՝ գործող փոխարժեք -0.03Դ	ԱՄՆ դոլար՝ գործող փոխարժեք -0.5Դ Եվրո՝ գործող փոխարժեք -1Դ ՌԴ ռուբլի՝ գործող փոխարժեք -0.03Դ
Աշխ. նախագծի ներքո քարտի տարեկան սպասարկման վճար	VISA Classic-Դ1000	VISA Classic՝ Անվճար
Աշխ. նախագծի ներքո սպառողական վարկի/վարկային գծի տոկոս	17%	16%
Հիմնադիրներին/տնօրենին***** տրամադրվող քարտի տարեկան սպասարկման վճար	Անվճար 2 VISA Platinum քարտի համար	Անվճար 3 VISA Platinum քարտի համար

	** ԱրՔա (Arca) քարտ* *** «Արմենիան Քարդ» ՓԲԸ ԱրՔա վճարահաշվարկային համակարգին միացած բանկերի կողմից թողարկված Master Card և Visa քարտեր* **** «Արմենիան Քարդ» ՓԲԸ ԱրՔա վճարահաշվարկային համակարգին չմիացած բանկերի կողմից թողարկված Master Card և Visa քարտեր, Mir քարտ* ***** կիրառելի է միայն նոր տրամադրված վարկերի դեպքում,* ****** մեկական քարտ (առանց փաթեթի) հիմնադիրներին կամ տնօրենին, ընդամենը՝ ոչ ավել քան 2 կամ 3 հատ կախված ընտրված տարբերակից*

Արշավից օգտվելու հիմնական պայմանները

1. «Ամերիաբանկ» ՓԲԸ «ՓՄՁ Փաթեթային առաջարկի» արշավից (այսուհետ՝ Արշավ) օգտվելու հիմնական պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) սահմանում են «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) և իրավաբանական անձանց /անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ Հաճախորդ, իսկ երկուսը միասին՝ Կողմեր) միջև Բանկի կողմից Արշավի պայմանների ներքո բանկային ծառայությունների մատուցման հետ կապված փոխհարաբերությունները:
2. Պայմանները հանդիսանում է հրապարակային առաջարկ (օֆերտա), որը համարվում է Հաճախորդի կողմից ընդունված (ակցեպտավորված) Բանկի սահմանած ձևանմուշով Հաճախորդի կողմից պատշաճ կազմված և ստորագրված/ վավերացված համապատասխան հայտ-պայմանագիրը Բանկ ներկայացվելու պահից:
3. Հաճախորդը, հիմք ընդունելով Արշավի սահմանված տարբերակները և դրանցից օգտվելու ցուցանիշները՝ հայտ-պայմանագրում նշում է Արշավի նկարագրում ներկայացված այն տարբերակը, որից օգտվելու նվազագույն չափանիշներին վերջինս համապատասխանում է:
4. Հայտ-պայմանագիրն ընդունելով՝ Բանկը համաձայնում է Հաճախորդի համար հասանելի դարձնել Հայտ-պայմանագրում Հաճախորդի կողմից նշված տարբերակով նախատեսված պայմանները, ընդ որում.

4.1. Եթե հայտ-պայմանագրի ներկայացման պահի դրությամբ Հաճախորդն արդեն իսկ օգտվում է իր կողմից ընտրված տարբերակում նշված ծառայություններից կամ դրանցից որևէ մեկից, ապա կիրառելի են հետևյալ պայմանները.

4.1.1. Այն ծառայությունները, որոնցից օգտվելու դիմաց, Բանկի հետ կնքված պայմանագրերին համապատասխան, Հաճախորդը կատարում է պարբերական վճարումներ (օրինակ՝ Ինտերնետ/ մոբայլ-բանկինգ ծառայության կամ վճարային քարտի սպասարկման վճարներ), դրանց գծով ընտրված տարբերակի ներքո հատուկ պայմանը գործում է տվյալ պայմանագրերի ներքո առաջիկա վճարման պահից, իսկ մինչ այդ կատարված վճարումները վերահաշվարկի կամ վերադարձի ենթակա չեն:

4.1.2. Այն ծառայությունները, որոնց դիմաց վճարումների չափը հաշվարկվում է որոշակի ժամանակահատվածում այդ ծառայությունների շրջանակներում կատարվող գործարքների ծավալից (օրինակ՝ «POS» տերմինալների սպասարկման պայմանագրի ներքո կատարված գործարքների ընդհանուր գումարից գանձվող միջնորդավճարներ), դրանց գծով ընտրված տարբերակի ներքո հատուկ պայմանը գործում է առաջիկա հաշվետու ժամանակատվածից:

4.1.3. Աշխատավարձային նախագծերի ներքո Հաճախորդի աշխատակիցներին տրամադրված վճարային քարտերը գործում են վերջիններիս հետ կնքված վճարային քարտերի տրամադրման և սպասարկման պայմանագրերով տվյալ պահին կիրառելի պայմաններով, իսկ ընտրված տարբերակի հատուկ պայմանները գործում են

աշխատավարձային նախագծի պայմաններին համապատասխան նոր վճարային քարտերի տրամադրման պահից:

4.1.4. Վարկային պարտավորություններ սահմանող պայմանագրերով (վարկ, վարկային գիծ, օվերդրաֆտ և այլն) նախատեսված տոկոսադրույքները շարունակում են գործել այդ պայմանագրերի պայմաններին համապատասխան, իսկ ընտրված տարբերակի տոկոսադրույքը կիրառելի է նոր վարկային պարտավորություններ ստանձնելու կամ գործող պայմանագրերում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ փոփոխություն կատարելու դեպքերում:

4.1.5. Այն ծառայությունները, որոնց դիմաց վճարումները ենթակա են կատարման յուրաքանչյուր գործարքի կատարման/ կնքման պահին (օրինակ՝ արժույթի փոխանակում), դրանց գծով ընտրված տարբերակի ներքո հատուկ պայմանը գործում է տվյալ ծառայության ներքո առաջիկա գործարքի կատարման/կնքման պահից:

4.2. Այն ծառայությունների մասով, որոնցից հայտ-պայմանագրի ներկայացման պահի դրությամբ Հաճախորդը չի օգտվում (ներառյալ՝ եթե կնքում է այդ ծառայությունից օգտվելու նոր պայմանագիր (օրինակ՝ նոր վճարային քարտի տրամադրում)), ապա այդ ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրերը/գործարքները կնքվում և սպասարկվում են ընտրված տարբերակում նշված համապատասխան պայմաններով:

5. Հայտ-պայմանագրի ընդունման պահից դրանով ընտրված տարբերակում թվարկված ծառայությունների գծով Բանկի և Հաճախորդի միջև կնքված պայմանագրերով նախատեսված պայմանները համարվում են փոխարինված՝ Պայմաններով և ընտրված տարբերակով սահմանված համապատասխան պայմաններով՝ հաշվի առնելով Պայմանների 4-րդ կետի կարգավորումները:

6. Հաճախորդը պարտավոր է Բանկին գրավոր ձևով տեղեկացնել իր կողմից ընտրված Արշավի տարբերակից օգտվելու նվազագույն ցուցանիշներին այլևս չհամապատասխանելու մասին՝ այդ փաստը պարզելուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, որի պարագայում ծանուցումը Բանկի կողմից ստանալու պահից Արշավի ներքո ընտրված տարբերակի կիրառումը համարում է դադարեցված, իսկ գործող պայմանագրերի ներքո հատուկ պայմանների փոփոխությունը կատարվում է Պայմանների 7.2 կետով սահմանված կարգով:

7. Հայտ-պայմանագրի ներկայացումից հետո Բանկը, իր կողմից որոշված պարբերականությամբ իրականացնում է ուսումնասիրություններ՝ Հաճախորդի կողմից ընտրված տարբերակին վերջինիս համապատասխանությունը ստուգելու նպատակով: Հաճախորդը պարտավոր է Բանկին տրամադրել պահանջվող բոլոր փաստաթղթերը և տեղեկությունները՝ այդ ստուգումները հավուր պատշաճի իրականացնելու նպատակով: Ստուգման արդյունքում Հաճախորդի համապատասխանության վերաբերյալ բավարար հիմնավորումներ չբացահայտվելու պարագայում Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել Հաճախորդին Արշավի պայմանների ներքո տրամադրված բոլոր և ցանկացած ծառայությունների գծով պայմանները՝ դրանք համապատասխանեցնելով տվյալ պահին գործող ստանդարտ սակագներին/սակագնային քաղաքականությանը և պայմաններին: Ընդ որում.

7.1. Արշավից օգտվելու նվազագույն չափանիշներին չհամապատասխանելու և դրա ներքո հատուկ պայմանների հետագա կիրառման դադարեցման մասին Բանկը պարտավոր է Հաճախորդին գրավոր ծանուցել Հաճախորդի կողմից հայտ-պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի միջոցով, որպիսի ծանուցման պահից Հաճախորդի համար հասանելի դարձված հատուկ պայմանները դադարում են գործել, և այդ պահից ի վեր վերջինս կարող է այդ ծառայություններից օգտվել հրապարակված ստանդարտ սակագներին և պայմաններին համապատասխան՝ ընդհանուր հիմունքներով:

7.2. Արշավի շրջանակներում գործող պայմանագրերի ներքո հատուկ պայմանների փոփոխության մասին Բանկը պարտավոր է Հաճախորդին նախապես ծանուցել՝ այդ պայմանագրերով սահմանված կարգով և ժամկետներում, որը հիմք է հանդիսանում ծանուցման մեջ նշված ժամկետից համապատասխան պայմանները փոփոխված համարելու համար:

8. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել Պայմանները կամ դադարեցնել Արշավի գործողությունը՝ այդ մասին Հաճախորդի կողմից հայտ-պայմանագրում նշված էլեկտրոնային փոստին առնվազն 10 օր առաջ գրավոր ծանուցելու միջոցով, ինչը հիմք է հանդիսանում, համապատասխանաբար, փոփոխված Պայմանները կիրառելու կամ Պայմանները դադարած համարելու համար:
9. Արշավին մասնակցելու նպատակով Հայտ-պայմանագրերը կարող են Բանկ ներկայացվել մինչ 31.12.2021թ.: